

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

«ԵՊՀ-ԷԱՃԾՁԲ-23/28 » ծածկագրով էլեկտրոնային աճուրդով ուղևորափոխադրումների ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Ալեք Մանուկյան 1

2023թ փետրվարի 21 – 2023թ մարտի 16

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Ս. Մարգարյան՝ (Գնահատող հանձնաժողովի նախագահ),

հանձնաժողովի անդամներ՝

Ա. Սահակյան՝ (Գնահատող հանձնաժողովի անդամ),

Լ. Խաչատրյան՝ (Գնահատող հանձնաժողովի անդամ),

հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Բադալյան՝ (Գնահատող հանձնաժողովի քարտուղար):

1. Տեղեկատվություն՝ «ԵՊՀ-ԷԱՃԾՁԲ-23/28 » ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

Հայտերը բացվել են www.eauction.armeps.am կայքի՝ էլեկտրոնային աճուրդների համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ 2023 թ-ի փետրվարի 20-ին ժամը 11:00-ին:

Գնման ընթացակարգի հակադարձ աճուրդը մեկնարկել է 2023 թ-ի փետրվարի 21-ին, ժամը 11:00-ին, ավարտվել է 2023թ-ի փետրվարի 21-ին, ժամը 12:00-ին:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	Մասնակցի անվանումը	էլ. հասցե, հեռ.
1	«Լոռե Թրավել» ՍՊԸ	էլ. հասցե՝ loctravel2011@gmail.com հեռ. 77753753
2	«Հոթել Հայկ» ՍՊԸ	էլ. հասցե՝ hotelhivesystem@gmail.com հեռ. 093667255
3	Ա/Չ Ռոբերտ Բարսեղի Ծառուկյան	էլ. հասցե՝ busservicearmenia@gmail.com հեռ. 93771677

3. Տեղեկատվություն յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին.

Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդում մասնակիցները ներկայացրել են հետևյալ վերջնական գնային առաջարկները.

Չափաբաժնի համար	Զբաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
				Արժեք	ԱԱՀ	Գին	
1	1	«ԼՈՌԵ ԹՐԱՎԵԼ» ՍՊԸ	840000	753200	0 %	753200	
1	2	«Հոթել Հայկ» ՍՊԸ	840000	761579	0 %	761579	
2	1	«ԼՈՌԵ ԹՐԱՎԵԼ» ՍՊԸ	950000	852000	0 %	852000	
2	2	«Հոթել Հայկ» ՍՊԸ	950000	861497	0 %	861497	
3	1	«Հոթել Հայկ» ՍՊԸ	960000	947034	0 %	947034	
3	2	«ԼՈՌԵ ԹՐԱՎԵԼ» ՍՊԸ	960000	956600	0 %	956600	
4	1	«ԼՈՌԵ ԹՐԱՎԵԼ» ՍՊԸ	5000000	4550000	0 %	4550000	
4	2	«Հոթել Հայկ» ՍՊԸ	5000000	4647097	0 %	4647097	
5	1	«Հոթել Հայկ» ՍՊԸ	4000000	3677101	0 %	3677101	
5	2	«ԼՈՌԵ ԹՐԱՎԵԼ» ՍՊԸ	4000000	3717080	0 %	3717080	
5	3	Ա/Զ Ռոբերտ Բարսեղի Ծառուկյան	4000000	3917922	0 %	3917922	
6	1	«Հոթել Հայկ» ՍՊԸ	6800000	6320155	0 %	6320155	
6	2	«ԼՈՌԵ ԹՐԱՎԵԼ» ՍՊԸ	6800000	6388124	0 %	6388124	
7	1	«ԼՈՌԵ ԹՐԱՎԵԼ» ՍՊԸ	10830000	9659000	0 %	9659000	
7	2	Ա/Զ Ռոբերտ Բարսեղի Ծառուկյան	10830000	9790000	0 %	9790000	
7	3	«Հոթել Հայկ» ՍՊԸ	10830000	10450000	0 %	10450000	
8	1	«Հոթել Հայկ» ՍՊԸ	13050000	11872133	0 %	11872133	
8	2	«ԼՈՌԵ ԹՐԱՎԵԼ» ՍՊԸ	13050000	12002596	0 %	12002596	
9	1	«ԼՈՌԵ ԹՐԱՎԵԼ» ՍՊԸ	12750000	11200000	0 %	11200000	
9	2	«Հոթել Հայկ» ՍՊԸ	12750000	11714534	0 %	11714534	
9	3	Ա/Զ Ռոբերտ Բարսեղի Ծառուկյան	12750000	11970000	0 %	11970000	

* Մերժման հիմք՝ նախահաշվային գնի գերազանցում:

4. Տեղեկատվություն՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Կարգի) 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Տեղեկատվություն հակադարձ աճուրդի արդյունքում (յուրաքանչյուր չափաբաժնի մասով) մասնակիցներից ստացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության, հայտերի կազմման և ներկայացման, հրավերի պահանջներին դրանց համապատասխանության մասին.

6.1 «ԼՈՌԵ ԹՐԱՎԵԼ» ՍՊԸ-ի կողմից փաստաթղթերը էլեկտրոնային թվային ձևով ստորագրվել է ոչ թե կազմակերպության տնօրենի, այլ ֆիզիկական անձ Յուրի Վարդանյանի կողմից, ինչով պայմանավորված 21.02.2023թ. «ԼՈՌԵ ԹՐԱՎԵԼ» ՍՊԸ-ին համակարգի միջոցով տրվել է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու, այն է՝ լիազորությունները հավաստող փաստաթուղթ ներկայացնելու հնարավորություն: Օրենքով սահմանված ժամկետում վերոնշյալ մասնակիցը շտկել է արձանագրված անհամապատասխանությունը:

6.2 «Հոթել Հայկ» ՍՊԸ-ի փաստաթղթերում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը (հավելված 1.2 կամ 1.3), ինչով պայմանավորված 21.02.2023թ. վերջինիս համակարգի միջոցով տրվել է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն: Օրենքով սահմանված ժամկետում վերոնշյալ մասնակցի կողմից շտկում չի կատարվել: «Հոթել Հայկ» ՍՊԸ-ն, վերը նշված անհամապատասխանությունների՝ համակարգում իրական շահառուների փաստաթղթի բացակայության վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացրել է հարցում այն մասին, որ շտկման բացակայությունը համակարգային սխալի պատճառով է առաջացել, ինչով պայմանավորված խնդրել է ներառել կցված իրական շահառուների փաստաթուղթը էլեկտրոնային աճուրդի փաստաթղթերի ցանկում: Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մինչև հայտերի գնահատման համար գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված վերջնաժամկետը վերոնշյալ հարցման վերաբերյալ պատասխան չի ստացվել /չի ներկայացվել գնահատող հանձնաժողովին/:

6.3 Վերոնշյալով պայմանավորված, գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 42-րդ կետով, որոշեց «Հոթել Հայկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ (ԳՊ/ԳԱՊ)՝



Մ. Մարգարյան

Անդամներ՝



Ա. Սահակյան



Լ. Խաչատրյան

Քարտուղար՝



Ա. Բադալյան

7. Տեղեկատվություն առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն գնահատող հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած /ընտրված/ ճանաչել

N	Մասնակցի անվանում	Չափաբաժնի համար
1	«ԼՈՌԵ ԹՐԱՎԵԼ» ՍՊԸ	1, 2, 4, 7, 9,

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8. Տեղեկատվություն գնահատման արդյունքների մասին

8.1. Հանձնաժողովը որոշեց՝ հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին՝ 1, 2, 4, 7, 9-րդ չափաբաժինների համար և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ ԷԱՃ-ի կազմակերպման կարգին համապատասխան:

8.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ գնման գործընթացը հայտարարել չկայացած 3, 5, 6, 8-րդ չափաբաժինների մասով, հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

9. Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին.

Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը և նույն հոդվածի 2-րդ մասը, որոշեց «Հոթել Հայկ» ՍՊԸ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով դիմել պատվիրատուի ղեկավարին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

10. Տեղեկություն՝ հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին:

Անհրաժեշտության դեպքում «ԵՊՀ-ԷԱՃԾԶԲ-23/28» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը կհրավիրվի անգործության ժամկետի ավարտի հաջորդող աշխատանքային օրը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ (ԳՊ/ԳԱՊ)՝



Մ. Մարգարյան

Անդամներ՝



Ա. Սահակյան



Լ. Խաչատրյան

Քարտուղար՝



Ա. Բադալյան